



ԱՐԱՐԱՏԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ (ՕՐՀՈՒՄ) ԿԵՆՏՐՈՆ

PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION (AARHUS) CENTRE OF ARARAT

АРАРАТСКИЙ ОБЩЕСТВЕННЫЙ (ОРХУС) ЦЕНТР
ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ



Գործունեության կիսամյակային
հաշվետվություն

2011թ.

Մ Ա Ր Տ – Հ Ո Ւ Ն Ի Մ

Արարատի բնապահպանական տեղեկատվական հասարակական (Օրհուս) կենտրոնն իր աշխատանքային գործունեությունը սկսել է 2011 թվականի փետրվարի 21-ից: Արարատի Օրհուս կենտրոնի գործունեությունն ուղղված է նպաստելու Արարատի տարածաշրջանի շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությանը, հասարակության շրջանում այդ հարցերի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանը և վերջիններիս ձայները համապատասխան մարմիններին լսելի դարձնելուն՝ հանդիսանալով էկոլոգիական հիմնախնդիրների քննարկման հարթակ:

Գործունեության առաջին իսկ ամիսներին տարվել է կենտրոնի փորձագետների խորհրդի ձևավորման աշխատանքները: Խորհրդի կազմում ընդգրկվել են հավասար քանակի ներկայացուցիչներ պետական և ոչ պետական կառույցներից՝ Արարատի մարզպետարանից և քաղաքապետարանից, Խոսրովի անտառ պետական արգելոցից, ՀՀ ԱՆ ՊՀ Առողջապահության նախարարության Պետական Հիգիենիկ Հակահամաճարակային տեսչության Արարատի մարզային կենտրոնից, հասարակական կազմակերպություններից, բիզնես սեկտորից, ինչպես նաև էկոլոգներ (Ընդհանուր թվով 14 անդամ): Խորհրդի առաջին նիստը տեղի է ունեցել մայիսի 20-ին: Խորհուրդը հաստատել է կենտրոնի 2011թ. աշխատանքային ծրագիրը:


2011 թվականի առաջին կիսամյակում Արարատի Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ՝ կենտրոնում և կենտրոնից դուրս կազմակերպվել են շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող հետևյալ միջոցառումները.

Հ/հ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՏԻՊԸ	ՔԱՆԱԿԸ	ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ
1.	Տեղեկատվության հասանելիություն /կլոր սեղան-սեմինարներ/	3	120
2.	Հասարակության մասնակցություն	4	150

	/հանրային քննարկումներ, կլոր սեղան-քննարկումներ/		
3.	Էկոկրթությանը նպաստող միջոցառումներ	6	275
4.	Միջազգային օրերի նշում	14	350
5.	Փորձագետների խորհրդի նիստ	1	14
6.	Հասարակական լսում	1	30
7.	Շաբաթօրյակ, ծառատունկ	1	50
8.	Մամլո ասուլիս /հարցազրույց/	1	-
	Ընդամենը՝	31	989

Միջոցառումների մասնակիցները հիմնականում եղել են ուսանողներ և աշակերտներ, ՏԻՄ-ի, բիզնես սեկտորի, ԳԱՄԿ-ի, բժշկական կենտրոնի, մարզպետարանի, ՋԼՄ-ների, հասարակության, ՀԿ-ների ներկայացուցիչներ, կամավորներ:

Ստորև գրաֆիկական տեսքով ներկայացվում է նրանց ընդգրկվածությունը վերոնշյալ միջոցառումներին.



Արարատի Օրհուս կենտրոնում, կենտրոնի գործունեության 4 ամիսների ընթացքում տեղի են ունեցել 31 միջոցառում, որոնցից 11-ը սեփական նախաձեռնությամբ, 11-ը՝ համատեղ այլ կազմակերպությունների հետ, 9-ը՝ տարածքի տրամադրում: Միջոցառումներն անց են կացվել ոչ միայն Օրհուս կենտրոնում այլև դպրոցներում, քոլեջներում, Արվեստի դպրոցում, բժշկական կենտրոնում և այլ կազմակերպություններում, համայնքներում : Կենտրոնի նախաձեռնությամբ (այդ թվում նաև այլ կազմակերպությունների հետ համատեղ) անցկացված միջոցառումներին ընդհանուր թվով մասնակցել են 989 մարդ:

Ս/թ հունիսի 10-ին «Արարատի ոսկու հարստացուցիչ ֆարբիկայի վերազինում նախագծի վերաբերյալ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՓԲԸ-ն ՀՀ Արարատի Օրհուս կենտրոնում, կենտրոնի աջակցությամբ կազմակերպեց «Արարատի ոսկու հարստացուցիչ ֆարբիկայի վերազինում» աշխատանքային նախագծի վերաբերյալ հասարակական լսումներ: Ներկայացված նախագծից պարզ դարձավ, որ

ընկերությունը նոր տեխնոլոգիաներ է ներդնում, որոնց շնորհիվ կնվազի ֆաբրիկայի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Կենտրոնը հանդիսացավ քննարկման հարթակ հասարակության, պետական կառույցների և բիզնես սեկտորի միջև՝ աջակցելով հասարակությանը մասնակից դառնալու որոշումների ընդունման գործընթացին:


Հաշվետու ժամանակահատվածում շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող և կազմակերպական մի շարք հարցերով կենտրոնում և կենտրոնից դուրս տեղի են ունեցել 15 աշխատանքային հանդիպումներ:

Նշված ժամանակահատվածում կենտրոն է այցելել և կենտրոնի ծառայություններից օգտվել է 362 մարդ:

Արարատի Օրհուս կենտրոնի ծառայություններն ու գործիքները

Ծառայությունները	մարտ	ապրիլ	մայիս	հունիս
Ֆիլմադարան	12	6	32	4
Գրադարան	10	5	18	6
Ինտերնետ	4	7	18	2
Պատճենահանող սարք	21	60	32	-
Տեսաձրիչ /սկաներ/	2	5	3	-
Համակարգիչներ	11	15	18	5
ԸՆԴԱՄԵՆԸ՝	60	98	121	17

Ստորև գրաֆիկական տեսքով ներկայացվում է վերոնշյալ ծառայությունների տեսակները, որոնցից օգտվել են կենտրոնի այցելուները.



Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի աշխատակիցները համագործակցել են մի շարք կառույցների հետ. ԵԱՀԿ գրասենյակ, Հայաստանի 14 Օրհուս կենտրոններ, ՌԷԿ-Կովկաս, Արարատի մարզպետարան, քաղաքապետարաններ, գյուղապետարաններ, ԳԱՄԿ, ուսումնական հաստատություններ, բժշկական կենտրոն, հիգիենիկ և հակահամաճարակային կենտրոն, մանկապարտեզներ, բնապահպանության մարզային տեսչություն, հրշեջ փրկարարական ջոկատի, մարզի և հանրապետության ՀԿ-ների, երիտասարդական կենտրոնների, կամավորների, բիզնես սեկտորի, հանրության հետ: Կենտրոնի համակարգողները մասնակցել են հանդիպումների, քննարկումների, սեմինարների ու կոնֆերանսների, ձեռք են բերել և փոխանցել գիտելիքներ: Կենտրոնի գործունեությունը լուսաբանվել է 'Երկրագործ', 'Ագրոլուր', 'Արարատ', 'Հետք' և 'Քոլսոն' թերթերում և տեղեկատվական կայքերում: Կենտրոնի իրականացրած բոլոր միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն է տեղադրված www.aarhus.am կայքում:

Արարատի Օրհուս կենտրոնի համակարգողներ՝ Հ.Հովհաննիսյան Հ.Սարգսյան

Հասցե: ք. Արարատ, Շահումյան 34

Հեռ.: 096-57-79-51

Բջջ.: 093 -06-09-07

E-mail: hovhannisyan@bk.ru

ripsime-84@mail.ru

info_ararat@aarhus.am